hospital with a heart

WIGMORE WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

# ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ


Հ. Ներսիսյան 10/7
Երևան 0014, Հայաստան

10/7 Nersisyan street
Yerevan 0014, Armenia

www.wigmore.am
+374 12345678


## ՈՒՐՈԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ն առաջարկում է կանանց առողջությանն ուղղված բժշկական բարձրակարգ ծառայություններ: Գինեկոլոգիայի և ուրոգինեկոլոգիայի փորձառու թիմը իրականացնում է հիվանդությունների վաղ ախտորոշում, կոնսերվատիվ բուժում:





Ուրոգինեկոլոգիական թիմի բժիշկների կողմից կատարվում են կոնքի օրգանների իջեցման և անմիզապահության բուժմանն ուղղված բոլոր միջամտությունները: Ուշագրավ է կոնքի օրգանների իջեցման կոնսերվատիվ՝ ոչ վիրահատական, բուժման նորագույն մեթոդը Հայաստանում՝ պեսարիաների տեղադրումը: Բաժանմունքում նաև առկա է նորագույն սերնդի ուրոդինամիկայի սարք, որի միջոցով կարելի է ախտորոշել անմիզապահության նույնիսկ ամենաբարդ տեսակները:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անպտղության բուժում նորագույն մեթոդներով
- Արգանդի հեշտոցային ֆիքսացիա՝ իջեցման կապակցությամբ
- Արգանդի հեռացում՝ լապարասկոպիկ, հեշտոցային և բաց եղանակներով
- Արգանդի պարանոցի / խոռոչի բիոպսիա
- Արգանդի պարանոցի LEEP, Էլեկտրոկոնիզացիա
- Արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտություն
- Լաբիոպլաստիկա՝ սեռական շուրթերի հեռացում, պլաստիկա
- Կոլպոսկոպիա / վուլվոսկոպիա
- Կոնսերվատիվ միոմէկտոմիա (միոմատոզ հանգույցների հեռացում՝ արգանդի պահպանումով)
- Հեշտոցի պատերի պլաստիկա
- Հիստերոսկոպիա՝ ախտորոշիչ, Էնդոմետրիումի պոլիպների, միոմաների հեռացում, ներարգանդային կպումների անջատում, կեսարյան հատման սպիի պլաստիկա
- Ձվարանների կիստաների հեռացում՝ լապարասկոպիկ եղանակով
- Միզածորանների ստենտավորում
- Միզապարկի բիոպսիա
- Միզապարկի ՏՈՒՌ բիպոլյար եղանակով
- Միզապարկ–հեշտոցային խուղակների պլաստիկա
- Ներարգանդային պարույրի տեղադրում
- Ուրեթրալ դիվերտիկուլների հեռացում
- Ուրոդինամիկա
- Ուրոֆլոմետրիա
- Պեսարիաների տեղադրում՝ արգանդի և հեշտոցի պատերի իջեցման շտկում ոչ վիրահատական եղանակով
- Սլինգային վիրահատություններ՝ TOT, TVT
- Սոնոհիստերոսկոպիա, սոնոհիստերոսալպինգոգրաֆիա (արգանդափողերի անցանելիության ստուգում)
- Տրանսվագինալ 3D սոնոգրաֆիա
- Ցիստոուրետրոսկոպիա
- Ցիստոսկոպիա՝ ախտորոշիչ

## ՄԱՄՈԼՈԳԻԱ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ի մամոլոգիական բաժանմունքում բուժառուն կարող է ստանալ կրծքագեղձի բարձրակարգ հետազոտում նորագույն սարքավորումներով, իսկ ախտաբանական փոփոխություններ հայտնաբերելու դեպքում՝ ճշգրիտ և հոգատար բուժում:



Բաժանմունքը սերտորեն համագործակցում է հիվանդանոցի գինեկոլոգիական և ուրոգինեկոլոգիական բաժանմունքի հետ հղիության ընթացքում և ծննդաբերությունից հետո ի հայտ եկող կրծքագեղձի խնդիրները բուժելու համար:

Մամոլոգիական բաժանմունքի գործունեությունը բաժանվում է երկու մեծ խմբի՝ ախտորոշիչ ծառայություններ և բուժական ծառայություններ:

## ԱԽՏՈՐՈՇԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կրծքագեղձի սոնոգրաֆիա
- Կրծքագեղձի պրոֆիլակտիկ սկրինինգ մամոգրաֆիա
- Կրծքագեղձի եռաշերտ թվային մամոգրաֆիա
- Կրծքագեղձի կոնտրաստային մամոգրաֆիա
- Կրծքագեղձի տրեպան և ստերիոտակտիկ բիոպսիաներ

## ԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մամոլոգ-ուռուցքաբանի կոնսուլտացիա
- Կրծքագեղձի բարորակ խնդիրների կոնսերվատիվ բուժում
- Կրծքագեղձի բարորակ խնդիրների վիրաբուժական բուժում
- Բարորակ գոյացությունների հեռացում
- Կրծքագեղձերի փոքրացում գիգանտոմաստիաների դեպքում
- Կրծքագեղձերի էսթետիկ վիրաբուժություն
- Կրծքագեղձերի վրա նախկինում տարած վիրահատությունների դեֆեկտների շտկում լիպոֆիլինգով և/կամ օնկոպլաստիկ վիրահատություններով
- Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման դեպքում համալիր ճշգրիտ ախտորոշում /հյուսվածաբանական հետազոտություն, քաղցկեղի իմմունոհիստոքիմիական հետազոտություն, պոլիօրգան ՀՇ/
- Կրծքագեղձի բորբոքային հիվանդությունների ամբուլատոր վիրաբուժական և կոնսերվատիվ բուժում

## ՄԱՄՈԳՐԱՖԻԱ

Մամոգրաֆիան կրծքագեղձի հետազոտումն է ռենտգենյան ճառագայթների օգնությամբ: Այն կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման ոսկե ստանդարտն է:

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ում մամոգրաֆիկ հետազոտությունն իրականացվում է նոր սերնդի մամոգրաֆիկ սարքի օգնությամբ:



## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՄԱՄՈԳՐԱՖԻԿ ՍԱՐՔԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ճառագայթման նվազագույն ինդեքս
- Բարձրորակ և գերճշգրիտ պատկերներ՝ եռաչափ շերտավոր նկարի շնորհիվ
- Հետազոտությունը գրեթե անցավ է․ կրծքագեղձն ավելի քիչ է սեղմվում
- Հետազոտությունն արագ է, տևում է ընդամենը 5-10 րոպե
- Պատասխանը տրվում է նույն օրը՝ 10 րոպեի ընթացքում